

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ**  
**ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ «ԵՐԵՎԱՆԻ ՓՈՔՔ ԿԵՆՏՐՈՆԻ  
ՎԵՐԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ» թեմայով**

ատենախոսության մասին

**ԺԸ.00.01 «ճարտարապետություն» մասնագիտությամբ**

**ճարտարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

Ատենախոսությունը բաղկացած է 135 էջ ընդգրկող հիմնական մասից՝ ներածությունից, 3 գլխից և ընդհանուր եզրակացություններից, 102 անուն աղբյուրների ցանկից և 22 հավելվածներից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի արդիականությունը և հիմնավորումը՝ Երևանի փոքք կենտրոնի միջավայրի տարրերի վերարժևորմանն առնչվող հիմնախնդիրների լուծման համակարգված մոտեցումների տեսանկյունից:

Թեմայի վերաբերյալ առկա ուսումնասիրությունների շրջանակը ներառում է ոլորտին առնչվող՝ միջազգային և հայրենական հետազոտությունները, մշակած նախագծերն ու պաշտոնական փաստաթյութերը:

Ներկայացված են նաև հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան, մեթոդաբանությունը, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, գիտական նորույթը, պրակտիկ արժեքը և արդյունքների հնարավոր ներդրումը:

Որպես հետազոտության նպատակ է սահմանված Երևանի փոքք կենտրոնի ճարտարապետական միջավայրի օարգացման արդի խնդիրների բացահայտումը և գեղագիտական որակի բարելավման համալիր վերարժևորման հիմնական ուղիների վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է Երևանի փոքք կենտրոնի վերարժևորման հիմնական ուղղությունների առանձնացման, դրանց վրա ազդող հիմնական գործոններն ու օրինաչափությունները բացահայտման, փոքք կենտրոնի վերարժևորման մեթոդաբանության և առաջարկությունների փաթեթի մշակման մեջ:

Հետազոտության արդյունքները կարող են ներդրվել փոքր կենտրոնի համար նախագծային փաստաթղթերի մշակման, ինչպես նաև մասնագիտական կրթության դասընթացներում:

**Հետազոտության 1-ին գլխում** («Քաղաքների ճարտարապետատարածական զարգացման ուղիները և վերարժնորման փորձը») ներկայացված են «Վերարժնորում» հասկացության սահմանումը, արտերկրի փորձի, քաղաքաշինական առանձին տեսությունների և հետազոտությունների վերլուծությունը, Երևանի վերարժնորման արդի փորձը և խնդիրները, ճարտարապետատարածական կանոնակարգման, գեղագիտական ամբողջականության վերականգնման, վերարժնորման և պահպանման միտումները, ներկայացվել են ոլորտի իրավական կարգավորմանն առնչվող փաստաթղթերը: Վերլուծություններն ուղեկցվում են առանձին հեղինակներին, ճարտարապետական համայիններին ու կառուցներին առնչվող օրինակների ներկայացմամբ: Ներկայացվել են նաև տվյալ գլխին առնչվող՝ 5 կետ ընդգրկող եզրակացությունները:

**Հետազոտության 2-րդ գլուխը՝** «Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» դիմագծի ձևավորման և գեղագիտական խնդիրների լուծման առանձնահատկությունները» վերնագրով, ներկայացված են Փոքր կենտրոնի տարածահատակագծային կառուցվածքի կազմավորման հիմնական գործոնները և տարածական միջավայրի զարգացման պայմանները, ընդ որում, թե, առաջին, թե երկրորդ խնդիրները դիտարկված են պատմական զարգացման տարրեր փուլերի համատեքստում: Գլխի ամփոփիչ մասն անդրադառնում է վերարժնորման հիմնական օբյեկտների համակարգին՝ ամերիկացի ուրբանիստ և գրող Քևին Լինչի առաջադրած սկզբունքների հիման վրա: Ըստ այդմ, որպես հետազոտության առարկա, առանձնացվել են քաղաքային միջավայրի ֆիզիկական կառուցվածքի հետևյալ տարրեր՝ ուղիներ, եզրագծեր, շրջաններ, հանգույցներ և կողմնորոշող օբյեկտներ: Թվարկված տարրերն ըստ առանձին բաղադրիչների ենթարկվել են SWOT վերլուծության՝ ներքին (ուժեղ և թույլ կողմեր) և արտաքին (հնարավորություններ և

սպառնալիքներ) ծագման հատկանիշներով: Ներկայացված են եզրակացություններ՝ կատարված հետազոտությունների վերաբերյալ:

**Հետազոտության Յ-րդ գլուխը՝ «Ճարտարապետահատակագծային միջավայրի վերաբերման ուղիները և գեղագիտական խնդիրների լուծման հիմնական սկզբունքները» վերնագրով, ներկայացված են վերաբերման արդի առանձնահատկություններն ու հիմնական սկզբունքները, դրանց մակարդակները, իրականացվել է վերաբերման գործընթացի կառավարման հիմնական պայմանների մոդելավորում և դրա հիման վրա ներկայացվել են միջավայրի գեղագիտական որակի բարելավման ուղղությունները: Մշակվել է Երևանի Փոքր կենտրոնի ճարտարապետատարածական միջավայրի վերաբերման օբյեկտների համակարգը և կառուցվածքային մոդելը: Ներկայացվել են նաև Երևանի առանձին շենքերի և դրանց առանձին բաղադրիչների, բակերի, փողոցների, առանձին համալիրների վերաբերման հայեցակարգային բնույթի նախագծային առաջարկություններ: Գլուխն ավարտվում է եզրակացություններով: Ընդհանուր եզրակացություններով է ավարտվում նաև ատենախոսությունը:**

Ատենախոսության թվով 22 հավելվածներում ներկայացված են հետազոտության գրաֆիկական բաղադրիչները՝ կառուցվածքային սխեմաները, հատակագծային և քարտեզագրական նյութերը, լուսանկարները, գծապատկերները, նախագծային առաջարկությունները:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, հարկ է անդրադառնալ նաև դրանում տեղ գտած առանձին բացերին, որոնք, թերևս, փորձի պակասի հետևանք են և կարող են շտկվել ատենախոսի հետազա աշխատանքներում.

1.Ատենախոսության տեքստը խմբագրական և սրբագրման որոշ միջամտությունների կարիք ունի, հատկապես տեսանելի են Վրիպակները և շարահյուսական անհարթությունները,- դրանց վերաբերյալ կոնկրետ նկատառումները աշխատանքային կարգով ներկայացվել են հեղինակին.

2.Հետազոտության առաջին գլխում առանձին բաժին է նվիրված ոլորտի

իրավական կարգավորումներին, սակայն եզրակացություններում այդ մասին անդրադարձ չկա: Այս բաժնում տրված են մեկնաբանություններ և վերլուծություններ 2013 թվականին շրջանառված և չընդունված՝ «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» <<օրենքի նախագծի առանձին դրույթների վերաբերյալ, ինչը կարծում ենք, փոքր-ինչ խնդրահարուց է, քանի որ չհաստատված իրավական ակտերի հիման վրա մեկնաբանություններն ընդունված չեն իրավաստեղծ պրակտիկայում.

3.Համակարգված չէ առանձին բաժինների և մասերի թվագրումը և դրանց հերթականությունը: Օրինակ՝ առանձին մասեր չունեն թվագրումներ, իսկ որոշ հատվածներում դրանք կրկնվում են.

4.Երկրորդ գլխում վերաբերման օբյեկտների կառուցվածքում (այսուակ 1) «եզրագծեր» մասում ներառված են միայն երկաթուղային խոչընդոտ պատնեշները, ինչը, կարծում ենք, բնորոշ չէ փոքր կենտրոնին և բնականորեն հետագա շարադրանքում անդրադարձ կա միայն մանկական երկաթուղուն, որը դժվար է դիտարկել որպես խոչընդոտ պատնեշ կամ եզրագիծ: Միաժամանակ, կողմնորոշող օբյեկտների ցանկում ներառված չեն մոնումենտալ արձանագրծության նմուշները, նկատի ունենալով, որ դրանք Երևանի պարագայում առանձին դեպքերում առանցքային նշանակություն ունեն:

5.Ատենախոսության 2-րդ և 3-րդ գլուխների տեքստային (հիմնական) մասերում տեղ են գտել առանձին ձևակերպումներ («օգտագործվել են», «դասակարգվել են»՝ էջ 58, «կատարվել է», «բացահայտվել են»՝ էջ 61, «քննարկվել են», «ցույց է տրվել»՝ էջ 104 և այլն), որոնք բնորոշ են եզրակացություններին.

6.Հավելվածներում տեղ են գտել մի շարք ուշագրավ նկատառումներ և նախագծային-հայեցակարգային առաջարկություններ, որոնք իրենց անդրադարձ չեն ստացել տեքստային մասերում:

Ներկայացված նկատառումները չեն նսեմացնում հետազոտության գիտական ու գործնական նշանակությունը: Բազմագործոն վերլուծությունների արդյունքում

ստացված արդյունքները հիմնականում համոզիչ են: Դրանք կարող են կիրառություն գտնել ինչպես Երևանին և այլ բնակավայրերին առնչվող զարգացման ծրագրեր մշակելիս, այնպես էլ նախագծային պրակտիկայում ու մասնագիտական դասընթացներում:

Մեսրոպ Վարդանի Սահակյանի թեկնածուական ատենախոսությունը՝ «Երևանի փոքր կենտրոնի վերարժնորման գեղագիտական խնդիրները» թեմայով, լիովին համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին և կարող է դիտարկվել որպես բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդիրի և համապատասխան լուծումների առաջադրում, իսկ դրա հեղինակն արժանի է ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Ճարտարապետության դոկտոր, դոցենտ

Մարգիս Թովմասյան

Ճարտ. դոկտոր Ս.Ա.Թովմասյանի ստորագրությունը հաստատում եմ՝  
ՃՇՀԱՀ-ի գիտական քարտուղարության աշխատավորության  
տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ

Լ.Հ.Լևոնյան

27.07.2023թ.

